ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 183 – Ա **13 մայիսի 2020թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 23-Ի N 16-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 19-րդ հոդվածի և «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի դրույթներով

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2012 թվականի հունվարի 23-ի «Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման մարզային հանձնաժողով ստեղծելու և մարզային հանձնաժողովի աշխատակարգը հաստատելու մասին» N 16-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«1.Ստեղծել արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասը գնահատող մշտական գործող մարզային հանձնաժողով հետևյալ կազմով՝

Գրիգորյան Նարեկ	- ՀՀ Գեղարքունիքի մարզպետի տեղակալ, հանձնաժողովի նախագահ
Գալստյան Գևորգ	- ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության պետ, հանձնաժողովի նախագահի տեղակալ /համաձայնությամբ/
Մուշեղյան Յուրա	- մարզպետարանի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ
Զոհրաբյան Արմեն	- մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ
Համբարձումյան Համբարձում	- մարզպետարանի գյուղատնտեսության և

բնապահպանության վարչության պետ

Զազյան Կարեն	- մարզպետարանի կրթության մշակույթի և սպորտի վարչության պետ
Վարդանյան Լուսինե	- մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պաշտոնակատար
Հարությունյան Վանիկ	- մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ
Խաչատրյան Գևորգ	- մարզպետարանի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ»:

13.05.2020

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

Подписано: SANOSYAN GNEL 1710830069

ՄԱՐԶՊԵՏ՝

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

ք. Գավառ